



ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ ԱՐԱԳԱՑՆԵԼՈՒ ՅՈՐԴՈՐ

Վարչապետի պաշտոնակատար Նեժիպ Միքաթի եգիպտական Շարմ Շեյխ քաղաքին մեջ տեսակցեցաւ Արժոյթի միջազգային հիմնադրամի ընդհանուր տնօրէն Քրիսթա-



լիա Ճիրճիեայի հետ եւ քննարկեց Նախնական համաձայնութեան ստորագրութենէն ետք Լիբանանի ձեռնարկած քայլերը: Ճիրճիեա մաղթեց, որ լիբանանեան կողմը արագացնէ համաձայնութեան բոլոր յօդուածներուն գործարկութիւնը, որպէսզի կարելի ըլլայ ստորագրել վերջնական համաձայնութիւնը:

Միքաթի Նաեւ տեսակցեցաւ Յորդանանի Ապտալա Բ. թագաւորին հետ՝ կլիմայական փոփոխութիւններուն դէմ



պայքարող պետութիւններու միջազգային համագումարի աշխատանքներու ծիրին մէջ: Յորդանանի թագաւորը շեշտեց Լիբանանի եւ Համաշխարհային դրամատան միջեւ համաձայնութեան շուտափոյթ ստորագրումը, որպէսզի Յորդանան կարենայ ելել տրակականութիւն տրամադրել Լիբանանին: Իսկ Եգիպտոսի Նախագահ Ապտէլ Ֆաթթահ Միսի վերահաստատեց իր երկրին շարունակական գորակցութիւնը Լիբանանին: Միքաթի շնորհակալութիւն յայտնեց Միսիին՝ Լիբանանին տրամադրուած օգնութիւններուն համար:

Լիբանանի մէջ Եգիպտոսի դեսպանութիւնը յայտարարեց, որ Եգիպտական զինուորական բեռնատար օդանավ



մը Պէյրուս կը փոխադրէ շուրջ 17 թոն դեղորայք ու քուլերայի պատուաստանիւթ: Վարչապետ Նեժիպ Միքաթի շաբաթ մը առաջ Եգիպտոսի Նախագահէն պահանջած էր օգնութիւն՝ պայքարելու համար քուլերային դէմ: Եգիպտոսի դեսպան Եսսէր Ալաուի յայտնեց, որ այս օժանդակութիւնը վերստին կ'ապացուցէ Լիբանանին գորակցող եգիպտական կեցուածքը, որ վերջին շրջանին շարունակաբար դրսեւորուած է մանաւանդ Պէյրուսի Նաւահանգիստի պայթումէն ետք:

ՊԱՏՐԻԱՐԸ ՈԱՅԻ ԱՅԱԶԱՆԳԸ

Մարոնիներու պատրիարք Պըշարա Ռահի կարտիսալը կաթողիկէ պատրիարքներու եւ եպիսկոպոսներու 55-րդ



խորհուրդի բացման հանդիսութեան ընթացքին ցաւ յայտնեց, որ «Լիբանանի պատերազմը կառուցողները այսօր տակաւին կ'իշխեն եւ կ'անդամալուծեն պետութիւնը՝ իրենց տարակարծութիւններուն պատճառով»: Ռահիի խօսքով, պատերազմ կառուցողները չեն կրնար խաղաղութիւն կառուցել: Ցաւ յայտնելով, որ պատասխանատուները չեն ուզեր նոր Նախագահ ընտրել, Ռահի ահազանգեց, թէ Լիբանան կը գտնուի իր քաղաքական, տնտեսական ու ելեմտական պատմութեան ծանրագոյն փուլին մէջ:

ՅԱԶՈՐԴԱԿԱՆ ՆԻՍՏԵՐ

Խորհրդարանի Նախագահ Նեպիի Պըրրի յայտարարեց, որ խորհրդարանի շաբաթական Նիստեր պիտի գումարէ՝ ընտրելու համար հանրապետութեան նոր Նախագահը: «Լիբանան ընդամենը քանի մը շաբաթ ես կրնայ



տոկալ միայն», ահազանգեց Պըրրի: Նախագահի ընտրութիւնը համարելով առաջնահերթութիւն, խորհրդարանի Նախագահը կող ուղղեց համաձայնելու այս հարցին առնչութեամբ:

Ան հաւատարկացուց, որ պահովական վիճակը վերահսկողութեան տակ է, ինչպէս Նաեւ վստահեցուց, որ դրամատանին ոլորտի վերադասաւորում պիտի չըլլայ, առանց պահովելու աւանդուածներուն իրաւունքները:

Խորհրդարանին մէջ երկէ տեղի ունեցաւ մնայուն յանձնաժողովներու միացեալ Նիստ մը, քննարկելու համար դրամատանին գաղտնապահութեան օրինագիծին մասնաւորութիւնները: Ազգային ազատ հոսանքի Նախագահ Ժըպրան Պասիլ Նիստին ընթացքին կարծիք յայտնեց, որ քաղաքական կամք կայ չվաւերացնելու նշեալ օրինագիծը: «Եթէ բոլոր համաձայն են անոր, ուստի պէտք է օրինագիծը այսօր իսկ վաւերացնել», ըսաւ Պասիլ եւ յիշեցուց, որ օրինագիծը պէտք է վաւերացուի երեք տարի առաջ:

ԲՈՒՆԵՐԱՅԻՆ ԱՈՒՆՉՈՒՄԸ ՄՏԱՅՈՂՈՒԹԻՒՆ

Առողջապահութեան հարցերու խորհրդարանական մնայուն յանձնաժողովի Նախագահ Երեսփոխան Պիլալ Ապտալա յայտնեց, որ յանձնաժողովը կառավարութեան խորհուրդ տուած է յայտարարել առող-



(Շաբ.ը տեսնել Չոր. էջ)

ՀԱՅ-ԱՏՐՊԵՅՃԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՆԻ ԵՈՐՔԻ ՄԵՋ

Միացեալ Նահանգներու Արտաքին գործերու Նախարարութիւնը երկէ հովանաւորեց Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործերու Նախարարներու հերթական տեսակցութիւնը: Նախարար Արարատ Միրզոյեան Նախ տեսակցեցաւ ամերիկեան արտաքին գործերու Նախարարութեան փոխտեղակալ Էրիքա Օլսոնի եւ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի ամերիկացի համանախագահ Ֆիլիպ Ռիքերի հետ: Ապա կայացաւ Միրզոյեանի տեսակցու-



թիւնը ամերիկացի պատասխանատուներուն եւ Ատրպէյճանի արտաքին գործերու Նախարար Ծէյիլուն Պայրանովի հետ: Աւելի ուշ տեղի ունեցաւ Նաեւ հայկական եւ ատրպէյճանական պատուիրակութիւններու հանդիպումը:

Հայաստանի Ազգային ժողովի փոխնախագահ Ռուբէն Ռուբինեան իր կարգին յայտարարեց, որ Սոչիի մէջ Ռուսիոյ, Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարներուն եռակողմանի ժողովին ընթացքին հրապարակուած յայտարարութիւնը վերահաստատեց Փրակի յայտարարութեան այն հատուածը, ըստ որուն, Հայաստանն ու Ատրպէյճանը կը ճանչնան տարածքային ամբողջականութիւնը Ալմա-Աթայի պայմանագրին հիման վրայ, ինչ որ կարեւոր փաստ է:

ԱՏՐՊԵՅՃԱՆԱԿԱՆ ԽԱՆՏՈՒՄ

Ռուսիոյ Պաշտպանութեան Նախարարութիւնը հաստատեց, որ Ատրպէյճան խախտած է զինադադարի դրութիւնը Արցախի Ասկերան շրջանին ուղղութեամբ: Միջադէպը տեղի ունեցած է 5 Նոյեմբերին, երբ ատրպէյճանական դիրքերէն հրաձգային կրակ բացուած է երկրագործական աշխատանքներ կատարող սարքերուն ուղղութեամբ՝ խրամորթէն դէպի արեւելք ինկած տարածքին մէջ: Կրակոցներուն պատճառով եղած է Նիւթական վնաս, առանց վիրաւորի կամ զոհի: Ռուսական յայտարարութեան համաձայն, ատրպէյճանական կողմին հետ բացուած է համատեղ հետաքննութիւն:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԼԻԲԱՆԱՆ ՎԱՂԵՄԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Եգիպտոսի Շարմ Շեյխ քաղաքին մէջ տեղի ունեցաւ կլիմայի հարցերու COP27 գագաթաժողովը, մասնակցութեամբ բազմաթիւ երկիրներու եւ կազմակերպութիւններու ղեկավարներուն: Համաժողովի ծիրին մէջ երկէ տեղի ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Վահագն Խաչատուրեանի տեսակցութիւնը Լիբանանի



վարչապետի պաշտոնակատար Նեժիպ Միքաթիի հետ: Վերջինս շեշտեց, որ հայ-լիբանանեան յարաբերութիւնները լաւագոյն աւանդութիւնները ունին թէ՛ քաղաքական, թէ՛ առեւտրատնտեսական տեսանկիւններէն: Խաչատուրեան իր կարգին ընդգծեց, որ Լիբանան արաբական աշխարհին մէջ Հայաստանի վաղեմի բարեկամներն է, իսկ փոխադարձ շփումներն ու համագործակցութիւնը ունին մնայուն սերտացումի եւ զարգացումի հնարաւորութիւններ:

Նախագահ Խաչատուրեան խօսեցաւ Արաբական լիկայի գագաթաժողովի մասնակիցներուն Ատրպէյճանի Նախագահ Իլհամ Ալիեւի ուղղած ուղերձին մասին, ուր Ալիեւ հայկական կողմը ամբաստնած էր ատրպէյճանական մզկիթներ կործանելու մէջ: Խաչատուրեան դատապարտեց նշեալ ուղերձը եւ յիշեցուց, որ քանդուած մզկիթ-

ները առնչուած են պատերազմին Նախորդած ժամանակաշրջանին հետ, երբ Նաեւ կործանուած են եկեղեցիներ: Միքաթի իր կարգին նշեց, որ անձամբ մասնակցած էր այդ Նիստերուն, հայկական կողմին կողմ ուղղելով աւելի աշխույժ հաղորդակցելու արաբական աշխարհի պետութիւններուն հետ՝ թիրմացութիւններէն ուսափելու եւ յարաբերութիւնները աւելի սերտացնելու համար:

Նախագահ Վահագն Խաչատուրեան տեսակցեցաւ Նաեւ իր իրաքցի պաշտոնակիցին հետ եւ Իրաքը համարեց տարածաշրջանին մէջ Հայաստանի վստահելի գործընկեր մը:

Նոյն համաժողովին ընթացքին, ՄԱԿ-ի ընդհանուր բարտուղար Անթոնիո Կուլթերեշ բացման հանդիսութեան ընթացքին յայտարարեց, որ մարդկութիւնը կը գտնուի



երկընտրանքի առջեւ՝ կա՛մ պիտի անհետանայ, կա՛մ պիտի համագործակցի՝ յաղթահարելու համար կլիմայական փոփոխութիւններուն վտանգաւոր հետեւանքները: Կուլթերեշ հաւատարկացուց, որ աշխարհի մէջ կան բաւարար միջոցներն ու գումարները՝ պայքարելու համար նշեալ երեւոյթին դէմ, պայմանաւ որ ըլլայ համագործակցութիւն:

ՎԵՇԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՈՒ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ

Շաբաթ, 5 Նոյեմբեր 2022-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. կաթողիկոս Մայրավանքի իր գրասենյակին մեջ ընդունեց միջեկեղեցական պատասխանատուներ՝ Չուլիցերիայեն, Գերմանիայեն, Դանիայեն, Ֆինլանդիայեն, Ամերիկայեն,



Եգիպտոսեն, որոնք Լիբանան ժամանած էին խորհրդակցություններ ունենալու Միջին Արևելքի մեջ քրիստոնեական ներկայություն ու վկայություն հարցով և իրենց զօրակցությունը յայտնելու շրջանի եկեղեցիներում՝ Միջին Արևելքի եկեղեցիներու կողմից (Մ.Ա.Ե.Կ.) ճամբով: Պատուիրակությունը երկօրեայ ընթացքում կատարած էր յիշեալ կողմերի պատասխանատուներուն հետ, թէ ի՞նչ ձևով վերադառնալ երկրներու եկեղեցիները գործնապես կրնան նպաստել կողմերի կարգ մը ծրագրերուն: Նկատի ունենալով Վեհափառ Հայրապետին երկար տարիներու միջեկեղեցական հարուստ փորձառությունը, պատուիրակության անդամները փափաք յայտնած էին Հայրապետին հետ ես հանդիպում ունենալու:

Նորին Ս. Օծուխանը նախ ընդհանուր գիծերով ներկայացուց միջազգային մակարդակի վրայ միջեկեղեցական շարժումին դիմագրաված մարտահրավերները, ապա լայնօրեն անդրադարձաւ Միջին Արևելքի եկեղեցիներու միջեկեղեցական գործակցության: Այս ծիրին մեջ Վեհափառ Հայրապետը կարգ մը մատնանշումներ կատարեց՝ շեշտելով եկեղեցիներու հաւաքական աշխատանքը անելի ամրապնդելու և կրթական ու մարդասիրական ծառայություններ ծախսելու անհրաժեշտությունը: Արարտին, Հայրապետը պատասխանեց իրեն ուղղուած հարցումներուն:

Նորին Ս. Օծուխանը հետ ունեցած հանդիպումէն ետք, պատուիրակությունը այցելեց Մայր Տաճար, Սրբոց Նահատակաց յուշարձան և «Կիլիկիա» թանգարան:

Յայտնենք, որ հանդիպման ներկայ էին Մ.Ա.Ե.Կ.-ի ընդհանուր քարտուղար դոկտոր Միշէլ Ապսը և օգնական-ընդհանուր քարտուղար Սեդա Խըտըշեանը:

ՄԱՅՐԱՎԱՆՔԻ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԿԵՐՏՆԵՐԸ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՎԵՐԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Կիրակի, 6 Նոյեմբեր 2022-ին, Մայրավանքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մեջ մատուցուած Ս. Եւ Ամմահ Պատարագէն ետք, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը Վեհարանի դահլիճին մեջ ընդունեց Մայրավանքի Կիրակնօրեայ վարժարանի աշակերտները, գլխավորութեամբ տնօրէնուհի Ժակին Դանիէլեանի:




Դանիէլեան խօսք անելով Հայրապետին զեկուցեց անցեալ տարեշրջանի Կիրակնօրեայ վարժարանին գործունէութիւնը և յայտնեց յառաջիկայ տարուան ծրագրերն ու աշխատանքները: Ապա, աշակերտները իրենց սովորած սաղմոսներէն, շարականներէն ու աղօթքներէն փունջ մը ներկայացուցին Վեհափառ Հօր:

Հուսկ, Նորին Ս. Օծուխանը փոխանցեց իր հայրական խօսքը: Ան, առաջին հերթին, կարեւորութեամբ շեշտեց կիրակնօրեայ վարժարաններու դերակատարութիւնը հայ կեանքէն ներս և ընդգծեց անոնց ճամբով մեր մանուկներուն քրիստոնեական դաստիարակութիւնը ճամբելու հրամայական անհրաժեշտութիւնը: Այս յանձնարարութեամբ ու գիտակցութեամբ մեր կիրակնօրեայ վարժարանները լծուած են իրենց վստահուած եզակի առաքելութեան: Իր խօսքի անարտին, Վեհափառ Հայրապետը բարձրօրէն գնահատեց բոլոր նուիրեալ ուսուցիչներն ու պատասխանատուները, որոնք կամաւորաբար և անձնուիրաբար լծուած են եկեղեցացիներն ու ազգացիներն այս սրբազան ծառայութեան: Այս առիթով Հայրապետը նաեւ իր գնահատանքը յայտնեց աշակերտներու ծնողներուն, որոնք իրենց գաւակները կ'առաջնորդեն դէպի կիրակնօրեայ վարժարան և կը գիտակցին, որ մեր ազգը առողջ երիտասարդութիւն ունենալու համար, հարկ է այսօրուան մանուկը դաստիարակել՝ քրիստոնեական ու հայեցի դաստիարակութիւն ճամբելով անոր:

ԱՐՑԱՆԻ ՆԱԽԱԳԱՐԸ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԸՆԴԱՅՆՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ ԶՐԱԻՐԱԾ Է

Արցախի Հանրապետութեան Նախագահ Արայիկ Յարութեան 7 Նոյեմբերին հրաւիրած է աշխատանքային ընդլայնուած խորհրդակցութիւն Ազգային ժողովի խմբակցություններու ղեկավարներուն և մշտական յանձնաժողովներու Նախագահներուն մասնակցութեամբ:



Քննարկուած են երկրի ներքին և արտաքին քաղաքականութեան վերաբերող շարք մը հարցեր, անդրադարձ եղած է 2023 թուականի պետական պիտոճի ծախսային մասի կառուցուածքային փոփոխութիւններուն: Խորհրդակցութեան կը մասնակցէին Ազգային ժողովի Նախագահ Արթուր Թովմասեանը, պետական Նախարար Ռուբէն Վարդանեանը, պաշտօնատար այլ անձեր:

ԳՐԻԳՈՐ ՄԻՆԱՍԵԱՆ ԸՆԴՈՒՆԱԾ Է ԱՆՏՊԵՏԱԿԱՆ ԶԱՐԿՈՒԹՅԱՆ ԹՄԱՐԱՄԻՋՈՅՆԵՐՈՒ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԵՒ ԻՐԱՎԱՊԱՀ ՀԱՍՏԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԻՒՐՈՅԻ ԵՒՐՈՊԱՅԻ ԵՒ ԱՍԻՈՅ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՏՆՕՐԵՆԸ

Արդարադատութեան Նախարարի պարտականութիւնները կատարող Գրիգոր Մինասեան ընդունած է ԱՄՆ Պետական քարտուղարութեան թմրամիջոցներու դէմ պայքարի և իրաւապահ համագործակցութեան բիւրոյի (INL) Եւրոպայի և Ասիոյ ծրագրներու տնօրէն Ժէյմզ Ափլէյթի գլխավորած պատուիրակութիւնը:



Հանդիպման ընթացքին ընթացած են ԱՄՆ Պետական քարտուղարութեան INL ծրագրի աշակցութեամբ իրականացուող բարեփոխումները, յատուկ անդրադարձ կատարուած է ոստիկանութեան ոլորտի բարեփոխումներու շրջանակներուն մեջ Պարեկային ծառայութեան ստեղծման և հանրապետութեան մեջ անոր ծաւալներու ընդլայնման, Պարեկային ծառայութեան մեջ կին պարեկներու ներգրաման խթանման, Ներքին գործերու Նախարարութեան ձեւաւորման, Ոստիկանական ձեւաւորման: Քննարկուած են նաեւ INL-ի այլ համագործակցութիւններ, ինչպիսիք են քրեական օրէնսդրութեան բարեփոխումները և հակափտածութեան ջանքերը:

Նշուած է, որ Ներքին գործերու Նախարարութեան ձեւաւորման ուղղուած օրէնսդրական փաթեթը արդէն իսկ ներկայացուած է Կառավարութեան:

Կողմերը փաստած են երկկողմ համագործակցութեան նկատելի արդիւնաւետութիւնն ու գրանցուած շոշափելի արդիւնքները:

Ներկայացուած է նաեւ Կառավարութեան կողմէ Պարեկային ծառայութեան օրինակով քրեակատարողական ծառայողներու պատրաստման գործընթացի կազմակերպման գաղափարը, ինչ որ յոյլ պիտի տայ նոր որակ հաղորդելու համակարգի աշխատանքին:

Հանդիպման անարտին պայմանաւորուածութիւն ձեռք բերուած է շարունակել արդիւնաւետ համագործակցութիւնն ու Նախանշել համագործակցութեան նոր ուղիներ:

«ԹՈՒԻԹԸՐ»-Ը ՊԵՏՔ Է ԴԱՌՆԱՅ ՏԵՂԵԿԱՏՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՍՏՈՅՔ ԱՂԲԻՐԸ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ. ԻԼՈՆ ՄԱՍԶ

Ամերիկացի միլիարատեր և ձեռնարկատեր Իլոն Մասք, որ Թուիթթըր ընկերային ցանցի սեփականատէրն է, յայտարարած է, որ այն պետք է դառնայ տեղեկատուութեան ամենաստոյգ աղբիւրը աշխարհի մէջ:

Ան նշած է, որ այդ է Թուիթթըրի առաքելութիւնը: Հոկտեմբերի վերջը Մասքը վերջնականապէս փակած է Թուիթթըրի ձեռքբերման 44-միլիարանոց գործարքը: Ան խոստացած է ազատականացնել ընկերային ցանցի խմբագրական քաղաքականութիւնը, որ շատ ընտանաբար է խիստ գրաքննութեան համար:

Twitter Inc. ամերիկեան ընկերութիւնը հիմնուած է 2006 թուականին: Ընկերութեան հիմնական արտադրանքը ընկերային ցանցն է՝ համառօտ հաղորդագրութիւններու փոխանակման համար: Կեդրոնակայանը կը գտնուի ԱՄՆ-ի Գալիֆորնիոյ Նասիակոյ Սան Ֆրանսիսքո քաղաքին մէջ:

ՎԼԱՏԻՄԻՐ ՍՓԻԼԱՅՈՎԻ ԳԼԽԱՎՈՐՈՒԹԵԱՄԲ ՅԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՊԻՏԻ ՄԵԿԱՐԿԵ ԶԻՆՈՒՈՐԻ ՏԱՆ ARMENIA 30 ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾԸ

Ազնաւոր խմբավար Վլատիմիր Սփիլաքովի գլխավորութեամբ 27 Նոյեմբերին Հայաստանի մէջ պիտի մեկնարկէ Չինուորի տան նոր՝ Armenia 301 Նախագիծը:

«Չինուորի տուն» վերականգնողական կեդրոնի հաղորդագրութեան մէջ կ'ըսուի, որ 2022 թուականի 27-28 Նոյեմբերին «Արամ Խաչատրեան» համերգասրահին մէջ աշխարհահռչակ խմբավար Վլատիմիր Սփիլաքովի ղեկավարութեամբ տեղի պիտի ունենան Ռուսիոյ ազգային ֆիլիարմոնիկ նուագախումբի հիւրախաղերը:



«Վլատիմիր Սփիլաքովի գլխավորութեամբ 27 Նոյեմբերին պիտի մեկնարկէ Չինուորի տան նոր՝ Armenia 301 Նախագիծը, որուն խորհուրդը միասնականութիւնն է և եւ համայն հայութեան համախմբումը մէկ գաղափարի շուրջ՝ Չինուորի տան շուրջ, որպէսզի կարենանք շարունակել օգնել, աջակցիլ, բարեկեցիկ կեանք ու ապագայ ապահովել հայրենիքի պաշտպանութեան ժամանակ վիրաւորում ստացած անձերուն: Armenia 301 Նախագիծի հիմքը Մարտիրոս Սարգսի «Հայաստան» կտան է՝ ստեղծագործութիւն, որ 100 տարի առաջ դարձաւ յոյսի, հաւատի, արեւշատութեան ու միասնականութեան խորհրդանշիչ և ուղերձ՝ դժուարութիւններու մէջ յայտնուած մեր ժողովուրդին համար: Չինուորի տունը կ'առաջարկէ համայն հայութեան ու հայ ժողովուրդի բարեկամներուն համախմբուիլ, միասնաբար ստեղծել կտակ կրկնօրինակը՝ այդպիսով մասնակից դառնալով հայրենիքի պաշտպաններու բարեկեցիկ ապագայի ստեղծման գործին», կը նշուի հաղորդագրութեան մէջ:

Համերգին Ռուսիոյ ազգային ֆիլիարմոնիկ նուագախումբին կատարմամբ պիտի հնչեն հայ, ռուս և արեւմտաեւրոպական յայտնի երաժշտահաններու ստեղծագործութիւններ: Որպէս մենակատար նուագախումբին հետ հանդէս պիտի գայ հայազգի հանրայայտ մեներգչուհի Աննա Ավաթովան:

Համերգի տոմսերէն ստացուած ամբողջ հասոյթը պիտի փոխանցուի «Չինուորի տուն» վերականգնողական կեդրոնին:

ԳՆԵԼ ՍԱՆՈՍԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՄԻՋԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀՆԱՐԱՒՈՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԶԱՐՑԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԾԻՇԴ ԾԱՆԱՊԱՐԿ ԿԸ ՀԱՄԱՐԸ

Հայաստանի տարածքային կառավարման և ենթակառուցուածքներու Նախարար Գնէլ Սանոսեան կը կարծէ, թէ Հայաստանի և Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան պայ-



մանագիր կնքելու տարբերակը հարցերու լուծման ճիշդ ուղղութիւնն է:

«Բայց պարբերաբար նշուած է, որ խաղաղութեան պայմանագիրը կ'ենթադրէ նաեւ մեր ինքնիշխան տարածքի վերականգնում», նշեց ան՝ յանդիմանելով, որ խաղաղութեան պայմանագիրը պիտի կնքուի այն պարագային, երբ ատրպէյճանական ստորաբաժանումները դուրս գան ՀՀ ինքնիշխան տարածքէն:





ՉԵՄՓԻՆՆԵՆԸ ԼԻԿԻ 1/8-ՐԴ ԱՄԱՐՏԱԿԱՆ ԿԻՃԱԿԱԶԳՈՒԹԻՒՆ

- Լայպցիգի - Մանչեսթեր Սիթի, - Զեյտա Պրիմ - Պենֆիք
- Լիվերպոլ - Ռեալ Մատրիդ, - ԱՄ Միլան - Թորթինգտոն
- Այնթաբաթ Ֆրանս, - Նախիչևան, - Պորտուգալիա S, - Չելսի
- Ինթեր Միլան - Փորթո, - Փարի Սեն Ժերմեն - Պայման Մ.

ԻՐՐՈՓԱ ԼԻԿԻ 1/8-ՐԴ ԱՄԱՐՏԱԿԱՆ ՓԼԵՅ-ՕՖԻ ԿԻՃԱԿԱԶԳՈՒԹԻՒՆ

- Պարսելոնա ՎՆ Մանչեսթեր Եուն., - Եուվենթինա - Նախ
- Սիտյուդենտես Լիգայոն - Միտլդերֆորդ, - Շախտյոր - ՌԵՆ
- Այաքս Ամսթերդ., - Ինդիպենդենթ Պրիմ, - Պայեր Լեվեր., - Մոնաքո
- Սելթյա - ՓՍՎ Այնտհով., - Սալցպուրկ - Ռոմա

ԻՐՐՈՓԱ ԸՈՆՖԵՐ. ԼԻԿԻ 1/8-ՐԴ ԱՄԱՐՏԱԿԱՆ ՓԼԵՅ-ՕՖԻ ԿԻՃԱԿԱԶԳՈՒԹԻՒՆ

- Զարապալ - Կենթ, - Թրապանոսիոր - Պազո
- Լազիո Ռոմա - ՍՖՌ Զլուց, - Սիտյուդենտես Պրազա - Ֆիորենթինա
- Պոստո/Կլիմա - Լեխ Փոզնան, - ԱԷԲ Լառնաքա - Տիմիո-1
- Շերիֆ Թիրասպոլ - Փարթինա, - Լուտոկորեց - Անտրվերթ

ԱՐԵՄՏԵՆ ԱՍԻՈՑ ՄԻՆՉԵՐ 23 ՏԱՐԵԿԱՆ ԱՆՈՑԵՆՆՈՒԹԵԱՆ 2-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ԼԻՔԱՆԱՆ ԶԻՋԵՑԱՒ ՕՍԱՆԻՆ

Սեուտական Արաբիոյ մարզադաշտերուն վրայ շարունակուեցան Արեմտեան Ասիոյ մինչեւ 23 տարեկան տղոց ֆուտբոլի ախոյեանութեան մրցումները: Մասնակցող վեց հաւաքականները բաժնուեցան երկու խմբակի եւ իւրաքանչիւր խմբակի առաջին երկու դիրքերը գրաւող խումբերը պիտի անցնին կիսաարտական փուլ: Ստորեւ տեսնել երկրորդ հանգրուանին արձանագրուած արդիւնքները.

- Ա. խմբակ.** - Լիբանան - Օման 2-4
Դասաւորում. 1) Օման 1 մ 3 կետ 4-2, 2) Զաթար 1 մ 1 կետ 0-0, 3) Լիբանան 2 մ 1 կետ 2-4
- Բ. խմբակ.** - Սեուտ. Արաբիա - Սուրիա 1-2
Դասաւորում. 1) Պահրէյն 1 մ 3 կետ 2-1, 2) Սուրիա 2 մ 3 կետ 3-3, 3) Սեուտ. Արաբիա 1 մ 0 կետ 1-2

ԱՆԳԼԻՈՑ ԱՆՈՑԵՆՆՈՒԹԵԱՆ 15-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ԱՐՍԵՆԱԼ ԵՒ ԼԻՎԵՐՓՈՒԼ ՅԱՂԹԵՅԻՆ

Անգլիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 15-րդ հանգրուանի վերջին մրցումներու ծիրին մէջ, առաջատար «Արսենալ»-ը իր դաշտէն դուրս մրցեցաւ 6-րդ դիրքը գրաւող



«Չելսի»-ի դէմ ու արձանագրեց իր 11-րդ յաղթանակը: Մրցումին միակ կողմ նշանակեց արագիցի պաշտպան Կապրիել Մակալիայէս, 63-րդ վայրկեանին, յարձակող Սաքայի փոխանցումէն օգտուելով: Այս հանգրուանին ուրիշ հետաքրքրական մրցում մը ընթացքին, 3-րդ դիրքը գրաւող Լոնտոնի «Թորթինգտոն Գոլփոլ» իր դաշտին վրայ մրցեցաւ 9-րդ դիրքը գրաւող «Լիվերպոլ»-ի դէմ, կրցեց իր 4-րդ պարտութիւնը ու նահանջեց չորրորդ դիրք: Եգիպտացի յարձակող Մոհամմատ սալահ օրուան աստղն էր: Ան՝ 11-րդ եւ 40-րդ վայրկեաններուն հաշիւը դարձուց 0-2, ուրուկուէյցի Նուսիբի մէկ փոխանցումով: Իսկ 70-րդ վայրկեանին, յարձակող քելսի հաշիւը դարձուց 1-2, փոխարինող շուտացի Զուլտեսլաքի փոխանցումով: «Մանչեսթեր Եունայթեդ» կրցեց իր 4-րդ պարտութիւնը, երբ իր դաշտէն դուրս գրեցաւ 13-րդ դիրքը գրաւող «Արսենալ»-ը: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Չելսի - Արսենալ 0-1
 - Արսենալ - Մանչեսթեր Եուն. 3-1
 - Սաութհեմփթըն - Նիւքասլ Եուն. 1-4
 - Ռեյսը ԶԷՄ Եուն. - Բրիսթոլ Փալաս 1-2
 - Թորթինգտոն Գոլփոլ - Լիվերպոլ 1-2
- Դասաւորում.** 1) Արսենալ 13 մ 34 կետ 31-11, 2) Մանչեսթեր Սիթի 13 մ 32 կետ 39-12, 3) Նիւքասլ 14 մ 27 կետ 28-11, 4) Թորթինգտոն 14 մ 26 կետ 27-18, 5) Մանչեսթեր Եուն. 13 մ 23 կետ 18-19, 6) Լիվերպոլ 13 մ 19 կետ 25-16

ՄՊԱՆԻՈՑ ԱՆՈՑԵՆՆՈՒԹԵԱՆ 13-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ԱԹԼԵԹԻՉ ԶԱՒԱՍԱՐԵՑԱՒ

Սպանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 13-րդ հանգրուանի մրցումներու ծիրին մէջ, 3-րդ դիրքը գրաւող «Աթլետիկո Նատրիտ»-ը իր դաշտին վրայ հաւասարեցաւ 16-րդ դիրքը գրաւող Պարսելոնայի «Եսպանիոլ»-ին հետ: Մրցումի 28-

րդ վայրկեանին, «Եսպանիոլ»-ի ուրուկուէյցի պաշտպան Զապրերա կարմիր քարտ ստացաւ: 62-րդ վայրկեանին, կիսապաշտպան Տարտեր նշանակեց «Եսպանիոլ»-ի կողմ, Խոսելուի փոխանցումով: Իսկ 78-րդ վայրկեանին, փոխարինող փորթուկացի ժոաո Ֆելիքս հաշիւը դարձուց 1-1, փոխարինող ֆրանսացի Լըմարի փոխանցումով: Իսկ Սելիյա քաղաքի տերպին «Ռեալ»-ի եւ «Սելիյա»-ի միջեւ աւարտեցաւ հաւասարութեամբ: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Աթլետիկո Մատրիդ - Եսպանիոլ 1-1
- Ռեալ Մատրիդ - Վալենսիա 1-1
- Վիյարեալ - Մայորքա 0-2
- Ռեալ Պելլիս - Սելիյա 1-1

ԻՏԱԼԻՈՑ ԱՆՈՑԵՆՆՈՒԹԵԱՆ 13-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ԵՆՎԵՆԹԻՆ ՅԱՂԹԵՅ ԻՆԹԵՐ ՄԻԼԱՆԻՆ

Իտալիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 13-րդ հանգրուանի մրցումներու ծիրին մէջ, 6-րդ դիրքը գրաւող «Եուվենթինա»-ը իր դաշտին վրայ մրցեցաւ 7-րդ դիրքը գրաւող



«Ինթեր Միլան»-ի դէմ ու յաղթանակ տարաւ: Ֆրանսացի կիսապաշտպան Ռապիո՝ 52-րդ եւ յարձակող Ֆակիոլի՝ 84-րդ վայրկեաններուն նշանակեցին կոլերը, սերպ կիսապաշտպան Զոսթիչի երկու փոխանցումներով: Միտլթարեան «Ինթեր Միլան»-ի հիմնական կազմին մէջն էր եւ փոխարինուեցաւ 81-րդ վայրկեանին: Այս շաբաթ տեղի ունեցաւ մայրաքաղաք Զոմի տերպին, «ԱՍ Ռոմա»-ի եւ «Լազիո Ռոմա»-ի միջեւ: «Լազիո» յաղթեց միակ կողմի վրայ 3-րդ դիրքը, մինչ «Ռոմա» նահանջեց 6-րդ դիրք: 29-րդ վայրկեանին, արագիցի կիսապաշտպան Ֆելիքս Էնտրոպըն նշանակեց կոլը: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Պոլոնիա - Թորինո 2-1
 - Սամփտորիա - Ֆիորենթինա 0-2
 - Ռոմա - Լազիո Ռոմա 0-1
 - Եուվենթինա - Ինթեր Միլան 2-0
- Դասաւորում.** 1) Նախիչևան 35 կետ 32-10, 2) ԱՄ Միլան 29 կետ 27-14, 3) Լազիո 27 կետ 25-8, 4) Աթլանթա 27 կետ 19-10, 5) Եուվենթինա 25 կետ 20-7, 7) Ինթեր Միլան 24 կետ 25-19

ԱՅՍՕՐՈՒՄԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐ

- ԱՆԳԼԻՈՑ ԼԻԿԱՅԻ ԲԱՃԱԿԻ 1/16-ՐԴ ԱՄԱՐՏԱԿԱՆ**
21:45 ԱՖՍ Պրիմըր (17) - Էվորթըն (16)
21:45 Պրենթըն (Ա.) - Ճիլինկի (Դ.)
- ՄՊԱՆԻՈՑ ԱՆՈՑԵՆՆՈՒԹԵԱՆ 14-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**
20:00 Էլչէ (20) - Ժիրոնա (14)
21:00 Աթլետիկո Պալաս (7) - Ռեալ Վալատոլիս (10)
22:30 Օսասունա (5) - Պարսելոնա (1)
- ԻՏԱԼԻՈՑ ԱՆՈՑԵՆՆՈՒԹԵԱՆ 14-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**
19:30 Նախիչևան (1) - Էմիլիո (14)
21:45 Զոմի (18) - ԱՄ Միլան (2)
- ԳԵՐՄԱՆԻՈՑ ԱՆՈՑԵՆՆՈՒԹԵԱՆ 14-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**
19:30 Վոլֆսպուրկ (11) - Պորտուգալիա Տորթինա (4)
21:30 Պայեր Միլիի (1) - Վերտեր Պրեմըն (7)
- ՓՈՐԹՈՒԿԱԼԻ ԲԱՃԱԿԻ 1/16-ՐԴ ԱՄԱՐՏԱԿԱՆ**
20:45 ժիլ Վիսենթ (16) - Արուքա (8)
22:45 Սաֆրա (Բ.) - Փորթո (Ա.)
- ՍԿՈՎԻՆԻՈՑ ԱՆՈՑԵՆՆՈՒԹԵԱՆ 15-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**
21:45 Լիվինկսթըն (8) - Էպըրտին (3)
- ՊՐԱՉԻԼԻ ԱՆՈՑԵՆՆՈՒԹԵԱՆ 37-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**
02:30 Սաօ Փաուլօ (9) - Ինթերնասիոնալ (2)
- ԹԵՆԻՍԻ ԿԻՆԵՐՈՒ ԿՄԲԱՅԻՆ ԲԱՃԱԿԻ ՄՐՑԱԿԱՆ**
12:00-Էն սկսեալ, «beinsports» կայանէն

info **ARARAD**

Սիրելի ընթերցող,
Տեղական, միջազգային, մշակութային, մարզական եւ այլ լուրեր բջջային հեռաձայնի վրայ հայերէնով ստանալու համար, անմիջապէս ներքեռնէ լիբանանեան առաջատար եւ անվճար «INFO 3» յաւելումը, որ հասանելի է Applestore-ի եւ Playstore-ի միջոցաւ:

Այսպիսով դուն հայերէնով եւ վայրկեանը վայրկեանին պիտի իմանաս օրուան վերջին զարգացումները:

ՖՈՒԹՍԱԼ ԼԻՔԱՆԱՆԻ ԱՆՈՑԵՆՆՈՒԹԵԱՆ 3-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ԱԼ ՅՈՐՐԻՅԱ ԵՒ ԲԱՆԱԿ ՅԱՂԹԱԿԱՆ

Լիբանանի ֆուտբոլի ախոյեանութեան 3-րդ հանգրուանի մրցումներուն արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- ՆՍԷ - Բանակ 1-2
- Զ.Մ.Ը.Մ. ՊՅ - Շուէյֆաթ 2-2
- Ֆուսսալ Փրո - Ալ Ճանուպ Ալ Ռիատի 4-3
- Շապիպաթ Ալ Նահտա Շուէյֆաթ - Ալ Ռապիի 3-10
- Ալ Յորրիյա Սայտա - Անտքէթ 4-2
- Թրիփոլի Ֆայհաս - Ճունի Ալ Ռիատի 0-16

Դասաւորում. 1) Ճունի 9 կետ 28-4, 2) Բանակ 9 կետ 20-4, 3) Յորրիյա 9 կետ 16-4, 4) Ֆուսսալ Փրո 9 կետ 13-8, 10) Զ.Մ.Ը.Մ. ՊՅ 1 կետ 5-12

ԹԵՆԻՍ ԿԻՆԵՐՈՒ ՄԱՍԹԵՐՈՒ ԱՄԱՐՏԱԿԱՆ ՄՐՑԱԿԱՆ ՍԱՔԵԱՐԻ ԵՒ ՇՎԻՈՆԹԸ ԶԻՋԵՑԱՆ

ԱՄՆ-ի Թեքսաս նահանգի Ֆորթ Ուորթ քաղաքի մարզադաշտերուն վրայ շարունակուեցան կիներու թենիսի մասըրգի աւարտական մրցաշարի մրցումները: Աշ-



խարի առաջին ութ կին մարզիկները բաժնուած են երկու խմբակի եւ իւրաքանչիւր խմբակի առաջին երկու դիրքերը գրաւող մարզիկները անցան կիսաարտական հանգրուան: Ստորեւ տեսնել կիսաարտական հանգրուանին արձանագրուած արդիւնքները.

- Զ. Կարսիա (6) - Մ. Սաքքարի (5) 6-3, 6-2
 - Ա. Սապալենքա (7) - Ի. Շվիոնթը (1) 6-2, 2-6, 6-1
- Աշխարհի թիւ 7 դասուած պելառու Արինա Սապալենքա սխրաբ կատարեց, երբ երեք սեթով կրցաւ յաղթել աշխարհի թիւ մեկ լեի Իկա Շվիոնթըն:

Մ Ա Ն Ա Զ Դ

Մ Ա Ն Ա Զ Դ

Տիկին Պերթա Տոքմեճեան եւ դստերը՝
Լիւի եւ Սարին (Զայաստան)
Տեր եւ տիկին Պարգեւ եւ Պերճուհի Տոքմեճեան (Գանատա)

Տիկին Մարի Տաղլեան եւ դուստրը (Լիբանան)
Տիկին Չարուկ Տաղլեան եւ զաւակուք (Լիբանան)
Տոքմեճեան եւ Ինճեան ընտանիքներ
Տիլմէլեան եւ Չափրագեան ընտանիքներ
Պոտրումեան, Սիլվեան եւ Տաղլեան ընտանիքներ
Էմմալին Տոքմեճեան, Տաղլեան, Ինճեան, Տիլմէլեան, Չափրագեան, Ճեմանեան, Պոտրումեան, Սիլվեան, Փափիրեան ընտանիքներ կը գուճեն իրենց ամուսնոյն, հոր, եղբոր, հորեղբոր, մորեղբոր եւ հարազատին՝

ԶՈՐՐԱՊ ՏԵՕՔՄԵՃԵԱՆԻ (Շնեալ՝ Զալեա, 1947-ին)

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 6 Նոյեմբեր 2022-ին, Երեւան:

Յուզարկաւորութեան եւ թաղման արարողութիւնը պիտի կատարուի Չորեքշաբթի, 9 Նոյեմբեր, ժամը 13:00-ին, Մալաթիայի Ս. Մարիամ Աստուածածին եկեղեցոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի եւ ամփոփուի Նորջ Մարաշի գերեզմանատունը:

Յաւակցութիւնները պիտի ընդունուին նոյն օր ժամը 17:00-19:00, հանգուցեալին բնակարանը, հասցե՝ Երուանդ Զոչար 15:

Այս տխուր առիթով, «Արարատ» օրաթերթի տնօրէնութիւնը եւ խմբագրական կազմը իրենց խոր վշտակցութիւնը կը յայտնեն հանգուցեալի տիկնոջ՝ Տիկին Պերթայի, դուստրերուն՝ «Արարատ» օրաթերթի աշխատակից Օրոյ. Լիսիին եւ Օրոյ. Սարինին, ինչպէս նաեւ հարազատներուն եւ ընտանեկան պարագաներուն:

ARARAD DAILY NEWSPAPER
MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN
Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: araradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمينية | المديرية المسؤولة: اني صرافيان
تصدر عن شركة مسييسر للمباعة والنشر (ش.م.م.)